ծարանը և նրանից հետո՝ Հայաստանում այդպիսին գոյություն ունեցել է, թե ոչ։

Անկախ այն բանից, որ մեր ձեռքի տակ դեռ ևս փաստեր չկան, պիտի ենթադրել, որ անցյալում նույնպես, թղթի մշակման արհեստանոցներ գոյություն ունեցել են։ Թղթի վրա գրված Հայկական հին ձեռագրերի այն հսկայական քանակությունը, որն ունենք այժմ, խոսում է հոգուտ այս ենթադրության։

Թղթի վրա եղած ձեռագրերից ամենահինը որ գտնվում է Մատենադարանում, դա 10-րդ դարի (971) մի պատմական ժամանակագրական ժողովածու է, գրված 358 թերթի վրա, միջին մեսրոպյան գրչությամբ Պետական ձեռագրատան (Մատենադարանի) ձեռագիր № 2679 (102)։ Թուղթը՝ ինչպես նաև ձեռագրերի մեծ մասի թղթերը, չունեն իրենց վրա ոչ մի գրոշմ, որից կարելի լիներ պարզել թե որտեղ է այն արտադրվել։

Ինչ վերաբերում է հետագային (այսինքն՝ Սիմեոնի կառուցած գործարանից հետո ընկած ժամանակին), կարող ենք ասել, որ Հայաստանում այլևս թղթի գործարան չի հիմնվել։ Սակայն արվել է մի փորձ՝ այդպիսին հիմնադրելու։ Այդ փորձը, որ կատարվել է Սահակ ծաղկաբեր եպիսկոպոսի կողմից՝ իր տեսակի մեջ մեծ հետաքրքրություն է ներկայացնում. ահա մի քանի տեղեկություններ այդ մասին։

1837 թ. ծաղկաբեր Սահակ եպիսկոպոսը խնդրագրեր է ուղղում Էջմիածնի սինոդին, նոր թղթագործարան, նկարչական ներկերի, կազմարարական ու այլ անհրաժեշտ նյութերի (պատաշ, նիշաստա, ժանգառ, լաջվարդ, գրմզի և այլն) արհեստանոց կազմակերպելու համար, (տես ՀՍՍՌ ժողովոմատյանի կից Պետական Ձեռագրատան արխիվային բաժին, Սինոդի տնտեսական մասի 1837 թ. նո 9 գործը)։ Սահակի առաջին խնդրագրի առթիվ Սինոդը իր նույն թվի մարտի 1-ի նիստում որոշում է. «հրամանագրել Սահակայ եպիսկոպոսի, զի նա առ այժմ թողեալ զմեքենայն իւր (թղթաշինության) յայտնեսցէ Սիմեոնոդոսիս, թէ առաջին անգամ որքան դրամք հարկաւորին նմայ՝ առ ի յառաջ ածել զերիս խոստացեալ ինամանէ նիւթս պատաշի, նաշիշտի և ժանգառի. և այնքան դրամով որքան կարող է պատրաստել զայնպիսիս, զի Սիմեոնոդոս կարասցէ յիւրում ժամանակի տրնօրինելոյ ըստ այսմ մասին զարժանն» (Նույն տեղ. թերթ 2)։

Այսպիսով թղթագործարանի կառուցման խնդիրը մերժվում է։

Երկրորդ և երրորդ խնդրագրերի քննությունից հետո, որ տեղի է ունենում սինոդի 1837 հուլիսի 16-ի նիստում, որոշվում է լուսարար Բարսեղ եպիսկոպոսին հանձնարարել անհրաժեշտ նյութերը և համապատասխան քանակությամբ դրամը տրամադրել ծաղկաբերին և ապա նրան հանձնարարել Ալիքուշակցի Զաքարիային, որը Սահակին տանելու է պղնձահանքը՝ նկարչական ներկերի արտադրության համար անհրաժեշտ հանքը որոնելու։

Ութն ամիս անցնելուց հետո, 1838 թ. մարտի 11-ին, Սինոդը նույն խնդրի մասին որոշում է. քանի որ մինչ այդ Սահակ եպիսկոպոսը և լուսարար Բարսեղը գործի հետագա ընթացքի մասին տեղեկություններ չեն տվել «որք դուցե խոպան ոչ մատուսցեն Սիմեոնոդոսիս ի պատճառս անկատար թողելոյ Սահակայ եպիսկոպոսին զայն առաջարկութիւն իւր, ըստ ինչ-ինչ անակնունելի դիպուածոյ, զգործն՝ որ ի Սիմեոնոդոսիս աստ ի մասինս այսմիկ, աւարտեալ համարել յիւրում ժամանակի տալ ի դիւանն վասն պահպանութեան» (Նույն տեղ թերթ 18)։

Հետագա մի օրագրից (1838 թ. ապրիլի 22) պարզվում է, որ ներկեր պատրաստելու համար Սինոդի պահանջմամբ պղնձաքար է ուղարկվել Ելիսավետպոլից՝ Հարություն վարդապետի կողմից և հանձնվել է Սահակ եպիսկոպոսին, որն օգտագործելով այն, պատրաստի նյութը հանձնել է տպարանի վերատեսչին։

Ստանալով ծաղկաբերի վերջին հայտարարությունը՝ Սինոդը բավարարվում է միայն նրանով, որ ծախսված գումարի դիմաց որոշ արդյունք ստացվել է և չի մտահոգվել գործը հետագայում առաջ տանելու և զարգացնելու համար։